



# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ

2 հուլիսի 2020 թ.

N 159-Ա

ք. Ստեփանակերտ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 10-ի «Արցախի Հանրապետության զբոսաշրջության ոլորտում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումը հաստատելու մասին» N69-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ բաժնի 1-ին կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Սույն բաժնով նախատեսված օժանդակության շահառու հանդիսանում են այն տնտեսավարողները, որոնք 01.01.2020 թվականից մինչև 31.03.2020 թվականն ընկած ժամանակահատվածում անընդհատ ունեցել են առնվազն երկու վարձու աշխատակից: Ընդ որում տնտեսավարողի՝ այլ ոլորտներում գործունեություն ծավալելու դեպքում հաշվի է առնվում տնտեսավարողի մոտ աշխատանքային պայմանագրերով աշխատող վարձու աշխատողների ընդհանուր թիվը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում են»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ